

Ժ Ա Մ ԱՆ Ա Կ Ա Կ Ի Ց Դ Է Պ Ք

Պիեռ-էնի արյանին Խնդիր-իւր :

ԼՈՒՌՈՎԻԿՈՍ Պիեռ-էնի հուշակաւոր գերմանացի երաժիշտը ծնած էր 1772ին Բրուսիայի Պոնա քաղաքը : Աս տարի Անգղիայի Թագուհին Գերմանիա եկած ըլլալով, օգոստոսի 12ին աս քաղաքս ալ եկեր է, հետն ալ Բրուսիոյ Թագաւորը ու շատ մեծամեծ իշխաններ, և Պիեռ-էնին արձանը մեծ հանդիսով կանգնեցրին :

Հրեշտակ :

ԳԱՂՂԻՍՈՅ Շաթոռու քաղաքին քովի գեղերէն մէկուն մէջ մօտերս աղջիկ տղայ մը ծնեց է երկու գլխով ու չորս սրունքով : Մայրը երկու գլխուներուն ալ զատ զատ կաթ կուտայ, կըսեն, ու երկուքն ալ բաւական առողջ և ուժով կ'երևնան : Աս հրեշտին համար ունեք շատ մը ստակ տուեր են ծնողացը որ գնեն ու սագիս անդին պարտքընելով ստակ վաստակին . բայց բարեպաշտ ծնողքը որ ուրիշ հինգ զաւակի ալ տէր են եղեր, իրենց աղքատութեանը չնայելով ամենեկին յանձն չեն առած ան առաջարկութիւնը : — Այնչափ զարմանալի չէ այսպիսի հրեշտեր պատահիլը աշխարհքիս վրայ որչափ որ զարմանալի ու գովելի է ան բարի ծնողաց գութն ու որդեկութիւնը :

Անեծի գաբիժ :

ՄՕՏԵՐՍ Լոնտոնայի մէջ ճոն ճոնրս անունով մէկը գինետան մը մէջ նստեր գինի կը խմէ եղեր : Կին մը ասոր հետ խօսք խօսքի կուգայ, կը սկսի ցուցնել թէ ան մարդը ստախօս է . անիկայ ալ կնկան ըսածը սուտ հասկելու մտքով կը գառնայ կըսէ ամենուն գիմացը . « Թէ որ ըսածս իրաւ չէ նէ, աս վայրկենիս մէջ մահը տանի զիս » : Դեռ խօսքը բերանն է եղեր, կաթուած մը կ'իջնայ վրան մարմնոյն ձախ կողմը կը չորցընէ . մէկէն կը վերջընեն զինքը հիւանդանոց մը կը տանին, մէկ երկու ժամէն կը մեռնի : — Խրատ ըլլայ աս սոսկալի պատիժը անոնց որ չար սովորութիւն ըրած են իրենք զիրենք կամ զուրիշները անիծելու, և կամ իրենց խօսքերուն ստույգութեանը զատուած վկայ կանչելու :

Շոգեգործիներուն Տոբին գէժ հարս :

ՇՈԳԵԳՈՐԾԻՆԵՐՈՆ Կամ շոգեգործիները աս մեծ պակասութիւնս ունին որ իրենց հանած մուխը գարշահոտ ու փրստակար ալ է : Աս բանիս գէժ մօտերս հնարք մը գտեր է Գոմպ անունով գաղղիացի ճարտարագետը, ու փորձը շատ աղէկ յաջողեր է . ան ալ Պելճիայի հանքային ածուխին վրայ, որ ամենէն աւելի Թանձը մուխ կը հանէ : Հնարքին գլխաւոր մասը աս է որ ածուխի վառարանին մէջ սովորականէն շատ աւելի օդ բանեցընել կուտայ . անով մուխին մեծ մասը բռնկելով կը վառի, ու միայն թեթեւ ու ճերմակագոյն մուխ մը գուրս կ'ելլէ . ինչպէս որ ասոր մէկ օրինակը կը տեսնուի նորելուք կանթեղներու վրայ : Աս գիտիս ետեւ ըլլալու հրաման հանողն է եղեր Գորտիէ անունով հուշակաւոր սեպուհը՝ որ տէրութեան կողմանէ բոլոր շոգեշարժ մեքենաներուն ընդհանուր վերատեսուչն է . ինքը շատ գոհ եղեր է գիւտին վրայ, ու հրաման տուեր է Գոմպին որ ուրիշ շոգեգործիներու վրայ ալ ընէ նոյն փորձերը . անկէց ետքը պէտք եղած կարգադրութիւնները պիտի հրատարակուին :

Չարմանալի գող յը :

ԳԱՂՂԻՍՏԻ պարոնին մէկը կուրծքին վրայ գնելու երկու հատ աղնիւ գնտասեղներ ունի եղեր, վրանին մէյմէկ հատ պողպատէ ճանճ հաստատած, ինչպէս որ տեղ տեղ սովորութիւն է . աս ճանճերը այնչափ սիրուն ու բնական են եղեր որ շատ մարդիկ իրական ճանճ կարծելով, պարոնին հետ խօսելու ատեն ձեռքով կը քշեն եղեր : Մօտերս աս կոճակներուն մէկը կը պակտի . տէրը իր ազատնոյն վրայ կասկածի կ'երթայ, բայց ձայն չհաներ . քանի մը օրէն մէկայն ալ կը կորսուի . ան ատեն կը բարկանայ տէրը ու գուրս կ'ընէ ազատինը : Վրան շատ չանցնիր, տանտիկինը իր տանը մէկ անկիւնէն մամուկի բոյն մը վերցընել տալու ատենը տեսնէ որ երկանը կոճակները ան խոշոր մամուկին բունին հետ վար կ'իյնան . որ անշուշտ մամուկը ողջ ճանճ կարծեր ու հոն տարեր է եղեր : Յայտնի է որ խեղճ ազատինը ետ կանչուեր ու աղէկ վարձատրուեր է :